« 12 » նոյեմբեր 2026թ. No 6681 - Ա

«ՎԱԽԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Նոյեմբերի 21, 2026թ., շարունակաբար, ք. Երևան («Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ) և առցանց («Զում» հարթակ)

«Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ

- Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 20-30 հոգի (առկա), մինչև 50 հոգի (առցանց)
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 3 տեսական կրեդիտ.
  դասավանդող Գոհար Անտոնյանին՝ ՇՄԶ 3 տեսական կրեդիտ
- Կոնտակտ 033003201

10:00-12:00	**Դասախոսություն** • Մանկական ստոմատոլոգիայում երեխայի հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, ստոմատոլոգիական վախի և անհանգստության առաջացման մեխանիզմները: • Երեխայի ադապտացիան ստոմատոլոգիական միջավայրին. ընդունելության կազմակերպման փուլերը, վստահության ձևավորումը և բժշկական միջամտություններին աստիճանական հարմարվելու մոտեցումները: • Երեխայի հետ արդյունավետ հաղորդակցման մեթոդները և վարքագծի կառավարման ժամանակակից մոտեցումները մանկական ստոմատոլոգիայում:
12:00-12:10	Ընդմիջում
12:10-13:00	**Դասախոսություն** • Դենտոֆոբիա. առաջացման պատճառները, կլինիկական դրսևորումները, կանխարգելման և հաղթահարման մեթոդները: • Ծնողների հետ արդյունավետ հաղորդակցություն. համագործակցության ձևավորում, ակնկալիքների կառավարում, բուժման տարբերակների քննարկում և հաղորդակցման բարդ իրավիճակների հաղթահարում: • Երեխայի անհատական առանձնահատկություններին և կլինիկական իրավիճակին համապատասխան բուժման ռազմավարության ընտրություն. վարքագծի կառավարման մեթոդների արդյունավետության գնահատում և բուժման այլընտրանքային մոտեցումների քննարկում: • Երեխաների ստոմատոլոգիական բուժման ընթացքում անհանգստության և ցավի վերահսկման ժամանակակից մոտեցումները. բուժման պայմանների և անեսթեզիոլոգիական աջակցության անհրաժեշտության գնահատման սկզբունքները: • Կլինիկական դեպքերի քննարկում և գործնական իրավիճակների վերլուծություն:

Դասավանդող՝ բժիշկ- ստոմատոլոգ Գոհար Անտոնյան: